Նար-Դոս

Գարուն

(Նմանություն Պեշիկթաշլյանին)

Ո՞հ, ինչպես մեղմիկ
Փչես դու, հովի՞կ,
Իսկ դուք, վա՛րդ, ծաղի՛կ,
Բուրեք անուշիկ.

Բայց ձեր բուրմունք
Սրտիս խորունկ
Միշտ են նկունք:

Ո՞հ, ինչպես քաղցրիկ
Երգես դու, թռչնի՞կ,
Կարծես, դու հեզիկ
Կարդաս ավետիք.

Բայց երգդ անույշ
Սրտիս անբույժ
Վիշտ է և գույժ:

Ո՞հ, ինչպես սիրուն
Դաշտի մեջ անհուն

Հանես քո մայուն,
Գառնո՛ւկ փայփայուն.

Բայց դու, գառնի՛կ,
Հայոց Զատիկ
Չըտաս հուշիկ:

Ո՞հ, ինչ անուշակ
Խոխոջ ձայնարձակ
Հանես, աղբերա՛կ,
Զըրեդ սառնորակ.

Խոխոջիդ ձայն
Չէ Արաքսյան
Իմ Հայկական:

Չե՛ք դուք Հայրենյաց
Փառաց հաղթությանց
Հուշիկք անմոռաց...

17 սեպտեմբ. 1884.